ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-7-5

ք. Երևան **11 -ը հուլիսի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***2,294,699.6 (Երկու միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր իննսունինը դրամ վեց լումա):*** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2017թ. մայիսի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Բուռնազյան 7
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570020500760100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00851011
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	Տնօրեն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	**Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հավելված 1
N ՄԱԾՁԲ-7-5 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Ծառայության անվանումը	Ս.թ. մայիսի 2-ից 6-ը ՀՀ ՊՆ 54574 զորամասում անցկացված ՀՀ ՋՈ զորամասերի հրամանատարների և նրանց տեղակալների հավաքների մասնակիցներին տրամադրված սննդամթերքի	
1.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	Լավաշ	լավաշ
		Վիչինա	ԳՕՍՏ 16351-86-վակուումային փաթեթավորմամբ մինչև 0,5կգ ծողիկներով, ստվարաթղթե արկղներով 20 կգ. տարողությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%
		Նրբերշիկ	I և II տեսակների, ԳՕՍՏ 23670-79, անվտանգությունը ըստ՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
		Գլուխ պանիր /Լոռի/	Տեխնիկական պայմանների համաձայն, Լոռի տեսակի, 46% յուղայնությամբ 5 կգ-ոց պոլիէթիլենային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%
		Խառը կանաչի	Կանաչի տարբեր տեսակի, համեմ, սամիթ, մաղադանոս,ռեհան, սոխ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3, 2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
		Վարունգ	Վարունգ թարմ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
		Լոլիկ	Լոլիկ թարմ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
		Ձեյթուն	ԳՕՍՏ 16351-86 - վակուումային փաթեթավորմամբ մինչև 0,4կգ, մետաղյա տուփերով, ստվարաթղթե արկղներով 20 կգ. տարողությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%
		Կիտրոն	Ամբողջությամբ հասած վիճակում
		Մանանեխ	Սննդում օգտագործվող համային հավելույթ, պոլիէթիլենային փաթեթավորմամբ 100գր: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ ՍԱՆ Պ-ին 2.3,2-107801) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
		Ատամմաքրիչ	Փայտից, երկու ծայրերը սուր, պլաստմասե տարաներով, մեկ ատամմաքրիչի երկարությունը 6 սմ, մեկ տուփի մեջ 50 հատ
		Կոլա 0,5	Գազավորված զովացուցիչ ըմպելիք «Կոկա-կոլա» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Ֆանտա 0,5	Գազավորված զովացուցիչ ըմպելիք «Ֆանտա» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Ջերմուկ 0,5	Գազավորված հանքային ջուր «Ջերմուկ» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Արզնի 0,5	«Արզնի» խմելու բուժիչ սեղանի ջուր, հիդրոկարբոնատային, նատրումական, սիլիկատային բորային գազավորված 0.5 լ. ապակյա և 0.5լ. պոլիմերյան տարաներում,ՀՍՏ 191 - 2000: Պահպանման ժամկետը մեկ տարի, փաթեթավորումը պոլիէթիլենային թաղանթով:
		Նոյ 0.5	Խմելու ջուր՝ շշալցված 0,5լ-ոց պոլիէթիլենային շշերում, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթում 12 շիշ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս 1 տարի շշալցումից հետո, մատակարարման պահին մնացորդային պիտանելիության ժամկետը ոչ պակաս 80%
		Մատուցվող ծառայության վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:	

ՀՀ	Ծառայության անվանումը	Ս.թ. մայիսի 14-ից 21-ը 3-րդ ԲԿ-ի և ուժեղացված միջոցների հետ անցկացված հրամանատարաշտաբային զորավարժության մասնակիցներին տրամադրված սննդամթերքի	
		Նրբերշիկ արհեստ	I և II տեսակների, ԳՕՍՏ 23670-79, անվտանգությունը ըստ՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01)

			սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
		Գլուխ պանիր /Լոռի/	Տեխնիկական պայմանների համաձայն, Լոռի տեսակի, 46 % յուղայնությամբ 5 կգ-ոց պոլիէթիլենային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%
		Խառը կանաչի	Կանաչի տարբեր տեսակի, համեմ, սամիթ, մաղադանոս, սոխ, ռեհան, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
		Վարունգ	Վարունգ թարմ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
		Լոլիկ	Լոլիկ թարմ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
		Ձեյթուն	ԳOUS 16351-86 - վակուումային փաթեթավորմամբ մինչև 0,4կգ, մետաղյա տուփերով, ստվարաթղթե արկղներով 20 կգ. տարողությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%
		Կիտրոն	Ամբողջությամբ հասած վիճակում
		Կոլա 0,5	Գազավորված զովացուցիչ ըմպելիք «Կոկա-կոլա» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
2.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	Ֆանտա 0,5	Գազավորված զովացուցիչ ըմպելիք «Ֆանտա» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Հանքային ջուր	Գազավորված հանքային ջուր «Բջնի» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Բնական ջուր 0.5լ «Բյուրեղ»	Խմելու ջուր ՝ շշալցված 0,5լ-ոց պոլիէթիլենային շշերում, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթում 12 շիշ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս 1 տարի շշալցումից հետո, մատակարարման պահին մնացորդային պիտանելիության ժամկետը ոչ պակաս 80%
		Մանանեխ	Սննդում օգտագործվող համային հավելույթ, պոլիէթիլենային փաթեթավորմամբ 100գր: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ ՍԱՆ Պ-ին 2.3,2-107801) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
		Ատամմաքրիչ	Փայտից, երկու ծայրերը սուր, պլաստմասե տարաներով, մեկ ատամմաքրիչի երկարությունը 6 սմ, մեկ տուփի մեջ 50 հատ
		Մեկանգամյա օգտագործման պոլիեթիլենային պարկ	Պոլիէթիլենային տոպրակ՝ նախատեսված սննդի համար:
		Սեղանի սփռոց	Սեղանի սփռոց մոմլաթե, լայնությունը 1000մմ, գույնը՝ բաց դարչնագույն, բաց շագանակագույն, առանց զարթանախշերի
		Մատուցվող ծառայության վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:	
		«Հաղթանակ» զբոսայգում ս.թ. մայիսի 9-ի տոնակատարության կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի վետերանների համար կազմակերպվող ճաշկերույթի համար լրացուցիչ ձեռքբերվող սննդամթերքի	
		Կոլա 0,5լ.	Գազավորված զովացուցիչ ըմպելիք 'Կոկա-կոլա' տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Ֆանտա 0,5լ.	Գազավորված զովացուցիչ ըմպելիք 'Ֆանտա' տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին:

3	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)		Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Սփրայտ 0,5լ.	Գազավորված զովացուցիչ ըմպելիք ' Սփրայթ' տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ (շաքարային կոլեր IV), թթվայնության կարգավորիչ (ֆոսֆորաթթու), բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Գազավորված ջուր 0,5լ.	Գազավորված հանքային ջուր «Բջնի» տեսակի, 0,5 լ-ոց պլաստմասե շշերով: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս քան 20%:
		Բնական ջուր 0,5լ.	Խմելու ջուր ՝ շշալցված 0,5լ-ոց պոլիէթիլենային շշերում, պոլիէթիլենային փաթեթավորմամբ, յուրաքանչյուր փաթեթում 12 շիշ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս 1 տարի շշալցումից հետո, մատակարարման պահին մնացորդային պիտանելիության ժամկետը ոչ պակաս 80%
		Օղի 1լ.	Էթիլ սպիրտ, վերամշակված խմելու ջուր, սննդային (էներգետիկ¤ արժեքը՝ 224.0 կկալ, տարողությունը 0,5 լ, թնդությունը՝ 40%, թԿհՁ < 51355-99, հպկՈԾ 2.3.2.1078-01
		Օղի «Ցարսկայա» 0.5լ	Էթիլ սպիրտ, վերամշակված խմելու ջուր, սննդային (էներգետիկ¤ արժեքը՝ 224.0 կկալ, տարողությունը 0,5 լ, թնդությունը՝ 40%, թԿհՁ < 51355-99, հպկՈԾ 2.3.2.1078-01
		Կոնֆետ կարամել	Շաքար, կական,կակաոյի յուղ, չոր անարատ կաթ, շիճուկ չոր կաթնային, մանրացված ընկույզ, անուշահամ նյութ, վանիլին:
		Թեյ	ԳՕՍՏ 1937-90 Թղթյա տուփով, մեկ տուփի մեջ 25 հատ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս 80%
		Պոլիէթիլենային պարկ	Պոլիէթիլենային տոպրակ՝ նախատեսված սննդի համար:
		Մատուցվող ծառայության վայրը՝ ք.Երևան, Սարմի 103 հասցեում:	

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Քանակ	1 անձի համար նախատեսված մթերքի արժեքը /դրամ/	Ընդհանուր գումարը /դրամ/	Ծառայության մատուցման ժամկետ
1.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	անձ	600	1,795.166	1,077,099.6	2017թ. մայիսի 2-ից 6-ը
2.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	անձ	250	4,122.8	1,030,700	2017թ. ս.թ. մայիսի 14-ից 21-ը
3.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	անձ	200	934.5	186,900	2017թ. մայիսի 9-ը
ԸՆԴԱՄԵՆԸ					2,294,699.6	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՏՏԱ ռեսուրսների կառավարման վարչության ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-7-5 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. համապատասխան ամիսների, այդ թվում՝							
			մայիսի	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.
1.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	98391160/1/1/1	1,077,099.6	1,077,099.6	1,077,099.6	1,077,099.6	1,077,099.6	1,077,099.6	1,077,099.6	1,077,099.6
2.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	98391160/1/1/1	1,030,700	1,030,700	1,030,700	1,030,700	1,030,700	1,030,700	1,030,700	1,030,700
3.	Ֆուրշետի ծառայության մատուցում (Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ)	98391160/1/1/1	186,900	186,900	186,900	186,900	186,900	186,900	186,900	186,900
Ընդամենը			**2,294,699.6**	**2,294,699.6**	**2,294,699.6**	**2,294,699.6**	**2,294,699.6**	**2,294,699.6**	**2,294,699.6**	**2,294,699.6**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Ռեդի» ՍՊԸ
տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3
N ՄԱԾՁԲ-7-5 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ՄԱԾՁԲ-7-5 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն